



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Thicla rimant sus parentis. Sigis. 1877.

Arm. 495.

ԾԱՌԱԾԵՐ

Թ Ե Կ Ղ Ի Ն

Ե Կ

ԵՐ ԲԱՐԻ ԳՈՐԾՔԵՐՆ:

Երկու բաժանմունքով

Հատոր I.

ԱՇԽԱՏԱՍԻՒԹՅՈՒՆԻՆ

Խ. 8 ԵՐ ԽԱԶԱՏՐԵԱՆՑԻ

ԱՇՏԱՐԱԿԵՑԻՈՑ:

ԹԻՖԼԻԶ

Ի ապարանի Համբարձումայ Էնթիամեանց եւ Ընկեր.

1877



891.99

Ա-41

Carm.
495.

891.99

m-41

-6 NOV 2011
495

ԾԱՌԱՍԵՐ

ԹԵԿՂԻՆ

ԵՒ

ԻՐ ԲԱՐԻ ԳՈՐԾՔԵՐՆ:

երկու բաժանմունքով

Հատոր I.

ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ՑԵՐ ԽԱՉԱՑՐԵԱՆՑԻ

ԱՇՏԱՐԱԿԵՑԻՈՑ

ԹԻՖԼԻԶ

Ի տպարանի Համբարձումայ Ենթիամեանց և Ընկառ

1877

ԲԻBLIOTeka
INSTITUTA
Naukovedeniia
Akademii Nauk
SSSR



20.08.1913

58331

Ա. Զ ՆԻԿ ԲԱՐԵԿԱՄ,

Պ. ՄԱՏԹԷՈՍ ՏԵՐ ՊՕՂՈՍԵԱՆ:

Պարզ է խիստ, որ երբ երեխայի միտքն աստիճանաբար ըստում է զարգանալ, իր հետաքրքիր դատողութիւնն զարձնում է ամեն անծանօթ առարկաների վերայ, և բոլոր լսածներն մի առ մի դասաւորում է իր փափուկ գաղափարին մակերեւութիւնը:

Այս դոյն-աշխատ փոքրիկ գրքուկիս եւ մի նպատակն զա է, որ զաւակներդ կարդալով՝ զզմն իրանց որդիական պարտքն, եւ լինեն ծնողասէր թեկդիի նման, վասն զի եւ ծնողասիրութիւնն տասն պատուիրանների մինն է:

Ուրեմն՝ սրտանց նուիրումնմ, ազնիւ ընկեր, թեկդիի պատական անցքերի 1 հատորն, որպէս զի զաւակներդ կարդան եւ թեկդիի զործնական անունն ժառանգեն:

Քոյ մտերիմ բարեկամ
Խ. Տէր Խաչատրեանց.

1876 ամի.
Եռ որբայ աղիտ:



60439-64

ԹԵԿՂԻ

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ



արուն էր. օրն պարզ. երկնքի գնդաձեւ առարկայն իր ոսկեփայլ դեղնագոյն շառաւ վիզներն դեռ նոր էր տարածել գունատ դաշտերուն վերայ, որով յատկապէս հրաւիրում էր անզարդ երկրին զգենուլ իր բնական զարգարանքներն. կանաչ մետաքսեայ սիզաւէտ դաշտերն հետզհետէ կը խոստանային իրագործել բնութեան խնդուրոյն շքեղութիւնն: Ծաղեկների թերթ թերթի վերայ հուզ եկած կոկոմներն, նոր էին սկսելբանաալ իրանց գոյնզգոյն թերթիկներն, և զմայլեցուցիչ առուշ հոտերով կը ձեւակերպէին այդ միջոցին կազմել այլ իմն շքեղուն տեսարան: Զագախառն թռչնոց երամի ներդաշնակ ձայնակցութիւնն զբաւում էին ամէն մի լողաց զգայուն միտքն: Սակայն այդ զբախաւալայր բնութեան վայելուչ զարդարանքներն՝ փո-

խանակ ուրախացնելոյ հայրակորոյս խեղճ թեկղիի
նման մի օրիորդի տխուր սիրտին, աւելի արտմու-
թեան պատճառներ էին ձեացնում նորա վերաւո-
րուած մատղաշ սրտին, թող թէ, երբ նա սովորա-
կանին պէս մերձակայ սարի գոգումն նստած կ'նայէր
իր հայրական որբացած տնակի վերայ, ուր տեղ
բնակում էր ինքն և իր թագագուրկ սգալի մայ-
րիկն, դառն կակիծներով տանջում էր իրան: «Ո՞վ
Տէր Աստուած, հառաչում էր նա, ո՛չ ասպաքէն այս
ամէն երկրի բարեվայելութիւնն մարդոյ համար
պատրաստեցիր, միթէ իմ հայրիկը միայն յանցաւոր
գտնուեց քոյ սուրբ պատուիրանների զէմ, որ այս շքե-
ղուն զարդարանքներիցն զլկուած՝ գերիների բանդի
անարդ անկիւններումն վեճակեցիր զեգերուելոյ: «Երբ
նա այս տեսակ աղէկոտոր ողբեր կ'կարդար իր ան-
մսիթար բաղդի վերայ՝ խանճոտած սրտի զառն
ծխովն արբեցած՝ ուշաթափ կ'զլորուէր թարմ գեանի
վերայ, և նորա չքնաղատիպ զէմքի գծագիրն հազիւ-
թէ ցոյց կտար փայլուն երեսի վերայ մասնաւոր կեն-
դանութեան նշմարանք: Այս, այդ էր միակ մսիթա-
րութիւնն խեղճ օրիորդի, որ երբեմնապէս զլկելով
նրան իր նուիրական զզայութիւնիցն՝ ցնորականովն
միայն կարողանում էր աչքի տակը երեակայել իր
սիրելի հայրիկին Եթովպացւոց գերիների բանդումն
դառն վեճակի մէջ. կ'թուէր նրան, որպէս թէ փառ-

ում էր նորա պարանոցաւն, և հայրախնամ գրը-
կումն ամփոփուելով՝ երջանիկ կ'համարէր իրան:

Գարունն անցաւ, երկիրն սկսեց իր վայելուչ
տեսարանիցն մերկանալ: Հոտաւէտ ծաղիկներն զու-
նաթափուելով՝ անյայտացան, և քաղցրախօս թըռ-
չունների ձայներն հետզհետէ դադարեցան. իսկ
թեկղին՝ իր սովորական դառն վիճակի մէջ գեգերուելով՝
միջոց էր որոնում իր աքտորուած հայրիկի ազատ-
մանն կարեկից լինելու:

Երբ թեկղին տարիների շրջանը մէկը միւսի
վրայով անցկացրեց, զարգացան և նորա առողջ
մաքերն. մարմինն ստացաւ իր երիտասարդական զօ-
րութիւնն, ուստի ծնողական սէրը հրաւիրում էր
նրան մի կողմն զնել ամէն մի անյաջող զէսքերն,
և ազատել իր հայրիկին գերիների բանդիցն. այդ
սրբազնն պարուքը կատարելու կմտածէր, և օր յա-
ռաջ իր նուիրական կացարանիցն հեռանալ կը ջանար:
Բայց ի՞նչպէս վատահանար, մտածում էր նա, սրտի
վարագութին տակ ծածկուած անհնարին խորհուրդը
սգալի մօրն յայտնել, որ նորա այրուած սիրտը աւ-
ելի չը բորբոքուի, իրար վերայ դարսուն ցաւերը չը-
սաստկանան, մի գուցէ, ատում էր նա, կենդանի
մարմնով գերեզման իջնի: Բայց որովհետեւ թեկղին
իր հայրիկի սիրովն զինաւորուած էր, և արդէն վր-
ձուել էր ինքն իրան կամ մեռանիւ կամ բանդի

գերութիւնից հօրն ազատել, ուստի ընտրեց նա մի բարեպատեհ միջոց, ընկաւ մօր ոտքերն, և կուսաւ կան աչքերիցն արտասուքն թափելով՝ ասաց հաւ մարձակ «Սիրելի մայրիկ, դիտես որ հայրիկիս գերի « տանելու եօթն տարին լրանում է արդէն, և այս « շըջանում մեր ունեցած կեանքը հողի տակ հանա « դիստ պարկածներիցն աւելի վասթար վիճակումն « է դանվում, ուրեմն լաւ է հողի տակ հանդիսա « քան թէ հողի երեսին կիսամեռ: Օրհնիր քոյ մի « ակ զաւակիդ, և թոյլ տուր նորան հեռանալ այդ « սգով շուարած տնակիցդ, իր հայրիկին ազատելու « համար:»

Մայրն երբ խոր ունկնդրութիւնով լսեց իր անմեղ զաւակի կաթնահամ բերանից սրտաձմլեկ խօսքերն՝ զարմացաւ, խսկոյն փալթալժուեց նորա ձուղածե պարանոցաւն, և ինչպէս ալանի դաշտում արօտաձարակ ոչխարն վերայ կվաղի աղու աւազեն, այնպէս էր նա լիզում քնքուշ թեկղիի կուսական կաթնարիւն երեմն. օրհնում էր հարկաւ նախախնամօղի անմահ անունն, որ պարգևել է իր միակ զաւակին զգայուն միտք, զգալ դեռ մատղաշ հասակին մէջ որդիական պարտքն, և չափի տակ ձգել ձնողական անկշուելի սէրն, բայց ներքին զգացմունքով նա վերաւրուած էր արդէն, նորա սրտի հասարաւոր ցաւերն՝ սկսեցին նորիցն շարժիլ: Օրիորդի

այդ վեեմ մտաղրութիւնն անմիիթար մօրն տարակուսանաց տակ ձգեց, նորա վակ բերանն ցոյց էր տալիս պարզապէս անհամաձայնութիւն, ըստ որում նորա միակ միսիթարութիւնն, անթիւ վերքերի բուժական սպեղանիքն, յետին հագագանաց շունչն՝ և նորա քայքայուած սրտի մի հատիկ սիւնն՝ մէն միայն թեկղին էր: Վերջապէս թեկղին երբ մօր տհաճ կամքն հաճութեան բերեց, իր օրիորդական հագուստի տեղն՝ նա հագաւ իր փոքր եղեօր՝ հողին պահտուած: Արհաւիրի կողոպուան, և վերջին հրաժարականն տալով իր նուիրական անզարդ տնակին, հեռացաւ մօր գրկիցն, տանելով իր հետը և նորա ձնողական օրհնութիւնը. ներկայացաւ նա սստիկանութեանը, և ստացաւ Արհաւիրի անունով արձակուրդ, Պարսկաստանի երկիրն ոտ կոխելու: Նրբ ամէն գործն կարգի բերեց, մտաւ նա քաղաքիցն դուրս՝ Ճանապարհին մօտ, քարաշէն փոքրիկ եկեղեցին, ուրտեղ Արհաւիրի հայրիկն գնում էր սովորաբար Աստուծոյն աղօթք նուիրելոյ, կանդ առաւ նա ձնկների վերայ, խոստովանեցաւ Աստուածածնայ առջևն, և խնդրեց շնորհ և կարողութիւն՝ «Անաբատ կոյս՝ սուրբ Աստուածածին, « գերիների յոյս՝ Մայր ծածկագիտին Աստուծոյ, որ « դեռ մարդն չէ դասաւորել իր սրտումն մի որեւիցէ « խորհուրդ՝ գիտէ նա, և ամէն անհնարինն՝ հնաւ « բաւոր են նորա առջևն, ուստի՝ սրտումն զիղուած

« դառնակակիծ ցաւերի կապանքն մի առ մի արձակելով
« կուսիդ առջևն՝ սրտի հեծեծանքներով աղաչում եմ,
« բարեմաղթեա կուսական զրկումդ բազմած Յիսուսին,
« կարեկից լինել մի ծնօղազուրկ Հայրակորոյս թշուառ
« օրիորդի փափազն լընելոյ, նորա առջեխ նկարագրուած
« ծանր դէպքերը հեշտացնելոյ, նորա մանկահաս անզօր
« ուժն զօրացուցանելոյ, որպէս զի Յիսուսիդ հզօր կարու-
« ղութիւնովն և ծնօղիդ գգուանաց շնորհիւն, կարողա-
« նայ իր ճակատին դրոշմած որդիական պարտքն կատա-
« րել, և Յիսուսապաշտ Հայրիկին այլակրօն թաթարների
գերեաց բանդիցն ազտաել»: Երբ նորա կանթեղա-
ձեւ միայն սեւ աչքերիցն արտասուքն հոսանաց գե-
տակ էր ձեւացնում, վերացական մտքերն դարձեալ
Արհաւերին երեւակայում էին, որպէս թէ՛ քաղցրիկ
Յիսուսն ժպիան երեսին հօր ձեռքէն բռնած յանձ-
նումէ Արհաւերին, ուշի գալով Արհաւերին՝ զգաց
իր զգայուն մտքի մակերեսոյթին վերայ՝ մի անսովոր
գաղտնիք: Պարզ երեսում էին նորա աչքերի դէմ
հեռատես երկիրների ամէն մի անծանօթ փողոցների
պտուտակներն, տեսնում էր նա զգայուն մտքով՝ իր
ողորմելի Հայրիկի թշուառ վիճակը, կարծես թէ՛ և
ինքն նորա զրկումն է: Արհաւերին ստանալով իր նը-
պատակին համեմատ Յիսուսաբաշխ զգայուն միտք,
ուժ և կարողութիւն, գոհունակ սրտով, սերտ հա-
ւատով, նուիրեց իր անմեղ շըթանց ջերմիկ համ-

բոյը Յիսուսին, և նորա կուսածին Մօրն, ու սկսեց
շարունակել իր ճանապարհն զէսի նպատակն, ուր
բնութիւնն հրաւիրում էր հարկիւ:
Թակղին անբաղդ հայրիկը՝ ձեզոյ Հայկունին,
հարիւրապետ էր արքունի զօրայ, ասպետական
նշաններով պսակուած, հսկայ և պատերազմի դաշ-
տերում հմտացած, հարազատ և արքունի գործքե-
րումն հաւատացած մի անձն, մանաւանդ բարեպաշտ
և Յիսուսի պատուէրներումն կրթուած մի ողի: Սա
իր վոեմ քաջադրծութիւններիցն յետոյ՝ Պարսից
վերջին պատերազմի միջոցաւ՝ մի կեղծիք բարեկամին
ձեռքով՝ մատնուեց անօրէն թաթարների ձեռքը,
մէկը միւսի վերայ վաճառելով՝ ողորմելուն միեցին
Նժողուացւոց բարբարոս երկիրն, ուրտեղ Հասարա-
կական զերիների հետը մէկ տեղ՝ աշխատացնում էին
արքունի հանքային գործքերումն: Ու մի արկած,
ու մի վիշտ, ու մի տառապանք, չէին նեղում
բարեպաշտ ձեզոմի արդար սրտիկն. նա այդ ցաւերն
ինչպէս ճակատագիր, Յիսուսի անունովն տանում էր
անտրոտունջ. նորա կսկիծն, շարունակ հառաչանքն՝
միայն իր ընտանիքն էին, իր փափկասուն թեկղի և
Արհաւեր որդիքն էին, որոնց համար միայն կը մտածէր
և կը տանջէր իրան. կտեսնէր նրանց իր զրկումն մի-
միայն վերացական մոտքերով. միւնոյն միմիթարական
տեսիլքն թեկղի, որ Յիսուսի առջևն՝ երկեցան և

Հեղոմին անորոշ միջոցում, և այն օրիցն սկսած՝ զգումէր նա իր քաջապիրտ ծնողասէր թեկղիի քաջարելութիւնն, և սպասում էր օր յառաջ իր սիրելի զաւակներին գրկել, նրանց քննուշ պարոնացաւն փարուիլ:

Արհաւիրն բնութեան խելամուտ հանձարնեւ բովն գնում էր աներկիւղ՝ առանց կանդ առնելոյ. անձանօթ ձանապարհներն երեւում էին նորա աչքերին սովորական. թէ ո՞ւր էր գնալոյ՝ զիտէր նա արդէն, և թէ ո՞ր քաղաքն՝ նա իր հոգւոյ աչքովն տեսնում էր մինչև անգամ նորանում և շարժուն մարդիկների թիւն: Վեցերորդ եօթնեակն էր. նա իր ձանապարհին վերջ տալով՝ մտաւ 1... քաղաքն, որ է Միջերկրական ծովային ափերումն. նա դիմաւու րուեց մի յունակրօն երեւելի վաճառականի պանդոկին և յերեկոյեանն գիշերեց պանդոկապետի մի առանձին սենեկումն: Արհաւիրն ձիգ ձանապարհից դադրած՝ դեռ սիրուն աչքերն մի հանդիսատ քնով չ'էր թարթել. իր ոսկեփայլ մազերն փոեց սպիտակ բարձի վերայ՝ մրայօն թուխ աչքերն փակեց՝ և քաղցր երազներով հանդիսատ քուն եղաւ: Խսկ պանդոկապետն՝ իր խառն հաշիւներովն զբաղուած լինելով՝ մոռացել էր նորաեկ օտարական փոքրիկ հիւրին: Գիշերային կենդանի ժամացուցի առաջին զարկն արթնացրեց բարի պանդոկապետին, և նորա առաջին

մոածողութիւնն ձգտեց պատանւոյն վերայ, կամեցաւ իմանալ նորա բարւոքապէս ընդունվիլն: Երբ պանդոկապետն մտաւ նորա առանձնեկի կացարանն՝ շուարեցաւ, հայեացքն ձգելով նորա հրեշտակային կարմրակալթ փայլուն դէմքին. երեսի վերայ նկարուած չքնաղատիպ գծագիրն պարզորէն ցոյց էր տալիս անմեղութեան նշաններ, միով բանիւ երեւում էին նորա վերայ բնութեան շքեղուն զարդարանքներն: Պանդոկապետն՝ հիացած այդ զարմանալի անսովոր տեսարանի վերայ, մոռացաւ խսպառ իր խառնիխուռոն գործերն: Սա նախազուշակում էր իր մէջ վեր առնել այդ մարմնաւոր հրեշտակին իրան որդեգիր, պսակել նորա վերայ իր մի հատիկ կիզայ դուստրն, և կարգել զրանցը տէր, և միանգամայն ժառանգ իր կալուածքների վերայ, և դարձաւ իր հանդիսատ սենեկան խրախուսուած սրտով:

Առաւօտեան դեռ մանուկ ժամերն նոր էին սկիզբն առել, արեգակի ձողուն շողերի կաթիւներն, պարսկածաշակ ձարտար կերտուածով շինուած եռանկիւնի գոյնզգոյն ապակեայ պատուհաններովն պանդոկապետի սենեկին նուիրել էին մի այլ իմն շքեղութիւն, երբ Արհաւիրն ներկայացաւ պանդոկապետին այդ շքեղուն զրախտավայր կացարանումն: Պանդոկապետի ցոյց տուած մեծարոյ պատիւներն հայրակարօտ Արհաւիրի համար գէթ մասնաւոր համարումն

չունեցան, որովհետեւ նա վառուած էր միմիայն իր ծնողական սիրովն. նա մի կերպ հագլւթէ կարողաւ նում էր սրտի դառն տիրութիւնն վարագուրին տակը թողուլ հեղձուած: Պանդոկապետն իր տաւա ջարկած հետաքրքիր հարցմունքների պատասխանն կարողացաւ այսքանն միայն իմանալ, որ Արհաւիրն է ազգաւ հայ, Հարիւրապետի միակ որդի, և այժմ որբ, թափառում է քաղաքներում՝ վիճակ որոնելու: Պանդոկապետի բուն խնդիրն դա էր, ուրեմն՝ մտածում էր նա, գործը վերջացած է: Պանդոկապետն նկատելով, որ իր յանձնարարական գործքերումն պարզ երևում էր Արհաւիրի հմտութիւնն, ուստի մի բարեպատեհ միջոցում առաջարկեց Արհաւիրին իր սրտի գաղտնիքն.... թէ և այդ տեսակ հրաւերն համապատասխան չ'էր Արհաւիրի ծպտեալ այրութեանը, այսու ամենայնիւ նա իր հեռատեսնը պատակն իրագործելոյ պատճառաւ, առանց բայց սութեան ցոյց տուեց երեսանց համահաճութիւն գոհունակ պարկեշտութիւնով: Բարի Պանդոկապետն՝ զգայուն հոգուով լուռած՝ գոհունակ սրտով՝ ծունր էր կրինում Երկնաւոր Հօրն, որ Արհաւիրի նման խելամուտն հանձարաւոր պատանւոյն Նախախնամութիւնն շնորհեց իրան որդի, որիցն նա զուրկ էր բոլորովին, ուստի կոչեց նա իր տասն և չորս տարեկան դուստր Ախային և յանձնեց Արհաւիրի իշ-

խանութեան ներքոյ՝ ասելով՝ «Սա է այսուհետեւ քոյ և հայրն և քոյ մայրն. Ճակատագիրն տնօրինեց Արշ և հաւիրին քեզ փեսայ ունենալ, ուրեմն պէտք է և հնագանդես սորա կամքին, մինչեւ քոյ մահն»: Այս պէս՝ իր հայրական օրհնութիւնը կարդալուց յետոյ՝ ինքն գնաց իր գործին, իսկ նոր ընտրեալներն առանձ նացած միւս սենեակութն, միմեանց համակշիռ օրիւ որդական համեստ զրոյցներովն, մէկ մէկու սրտեր էին շահում: Պանդոկապետն որովհետեւ մօտ օրերու մն պէտք է հեռանար իր անակիցն ձիգ քաղաքներ ապրանեք գնելոյ գործով, ուստի շուտով կատարեց այդ միասեռ չքնաղ օրիորդների նշանադրութեան հանդէսը, ամենափառաւոր հանդիսով, թողնելով ամունութեան սրբազնն կարգի կատարումն իր վերադարձին, և ամէն մի պատուէրների աւանդելուցն զինի, յանձնեց Արհաւիրին տան ներքին և արտաքին կառավարչական իրաւունքներն, և ինքն ապահով շարունակեց իր հեռաւոր ձանապարհն:

Երկար չըտեեց, քաղաքումն բարձրացաւ ժողով վորական մի համագոյժ ձայն. լաւում էր որպէս թէ բարի պանդոկապետն Հարաւային օվիխանոսումն ծովահեղձ է եղել: Այդ տիսուր լուրն յունակրօն ժողովրդին տարակուսանաց տակ ձգեց, ցաւում էին պանդոկապետի մահուան մասին որովհետեւ քաղաքի Յունաց և Պարսից իշխողն միայն պանդոկապետն

էր: Յոյնքն նորա շնորհիւն էին կարողանում իրանց սրբազն կրօնն համարձակ կատարել, չորս դին պատաժ բարբարոս Պարսիկների կենդրում: Պանդու կապետի շքեղ զարդարուն կացարանն դառն սգով լցուեց, նոր կինն և դեռահաս դուստր Ախայն կը ջանային մահու վրաւել իրանց կեանքը, բայց Արծաւիրն՝ որուն աչքին պարզ երևում էր պանդու կապետի ներկայ դրութիւնն, որոյ նաւն խորտակուելով թէե բիւրաւոր մարդիկներ ծովահեղձ էր արել, բայց նա քանի մի բարեգործ ընկերներով նաւակի մի մասն ձեռք բերելով՝ անտակ ծովուն մակերեսոյ թին վերայ տարուքեր էին լինում, յուսալով Աստուծոյ միակ օգնութեանը, խրատ էր կարդում նորանցը, հաւատացնում էր պանդոկապետի կենդանի լինելն, և սրտանց խոստանում էր իրանց բարի տիրոջն աշ զատել: Արհաւիրն թէե նրանց հետը ցաւակից էր, բայց միւս կողմով ուրախ էր այդ ցաւալի դէպքին համար, նրան թւում էր, որ այդ դէպքը իր հայրիկին ևս կարող է ազատման պատճառ լինել գերիների բանդից:

Արհաւիրն արդէն դուշակում էր իր առջեկ ահարկու ցաւալի դէպքերը, բայց որովհետեւ նա վառուած էր հայրական վառվուուն սիրովն, ամէն հարկաւորելիքն հոգալուցն զինի՝ իր նաւակի առաջնակարգ ընթացքը դարձրուց դէպի մտքին դրած նպատակն:

Սրնթաց նաւակին մինչդեռ ծովային ալեքներին երկու կողմիցն պատի նման կանգնեցրած կլողայր յառաջ, նաւակի յառաջն յանկարծ փակեց զինաւորուած աւազակների խումբն, ուստի պաշարելով նաւակի չորս կողմն՝ կողոպտեցին բոլոր հարստութիւնը, ջրասոյզ առնելով նաւականներին: Խակ Արհաւիրին, որոյ գեղեցկութիւնն յափշացրեց աւազակներին, առան իրանց նաւակին և տարան: Նա որ շտապում էր ազատելու պանդոկապետին ծովային կատաղի ալիքներիցն, և իր կարօտ հայրիկին բարբարոսաց գերիների բանդիցն, այսօր աւազակների ձեռքին գերի է կոչվում: Նա՝ որ իր յետին մարմնական ձիգն գործ դնելով՝ աշխատում էր ցաւալի դրութիւնում գտնուած բարի մարդիկներին օգնական ձեւանալ, ներկայումն ինքն դառն վիճակում, ուրիշների օգնականութեանն է կարօտում Այս տեսակ կսկծալի մտածական ձեւակերպութիւններն Արհաւիրի գեռ մանուկ ժամանակից տիսրած սիրտն էին տոչորում, բայց նա դարձեալ ուրախ էր, որ այդ վիշտն, տառապանքն, իր որդիակարօտ հայրիկի ազատման համար է կրում:

Աւազակների նաւակումն կային երկու եղբարք, միատեսակ գեղեցիկ ցոյդ ծնունդ, ազգաւ հայ, մէկ ազնուականի որդիք, անուններն մէկնը Բրաբինն և միւսինը Սրաբիոն, որոնք բարձր տեղերումն ուսումն աւարտած՝ դառնալով իրանց հայրենիքն, առ

ւազակներին զոհ էին եղել. ուստի այդ նաւակումն հայկական լեզուով խօսողներն միմիայն այդ երեքն էին. Արհաւիրն շատ շուտով բարեկամացաւ այդ երեկու համեստ եղարց չետ, որոնք կարճ միջոցում Արհաւիրի սիրովն գրաւուած՝ մէկ մէկու յօժար էին սրտանց անձնատուր լինելոյ: Հայկական ձոխ լեզուով խրախուսում էին միմեանց և սրտերի գաղտնիքներն հաղորդում էին իրարու պարզորէն. միմիայն Արհաւիրի ծպտեալ իգականութիւնն էր մնում քուղարկուած: Երբ նոքա Արհաւիրի գժուարին նախատակն իմացան, նրանցը աւելի շարժեց ծնողական սիրոյ գութը, ուստի սրտանց ուխտեցին, եթէ աւաղակների ձեռքից ազատուեն, Արհաւիրի ցաւալի դրութեանը կարեկից լինեն:

Որն անց էր, արեգական թոյլ ձառագայթների վերջին վայրկեաններն էին, և նորա փոխարէնն՝ զիշերային թագուհին էր սկսում իր ծառայական պաշտօնն վարել, երբ աւազակների նաւակն հանգիստ առաւ ծովային ափերի մօտ՝ մի գաղտնի տեղում: Աւազակների խումբն նաւակիցն զուրս՝ անտառախիտ ծառերի տակին սրտի ուրախութիւնով լցուած՝ հանգէստ էր կատարուած, և զիշերային հանդիսա քունն հրաւիրեց նրանցը զիշերել կանաչ մետաքսագոյն սիզաւէտ տեղումն. իսկ Արհաւիրն իր բրաբիոն և Սրարիոն ընկերներովն միայն էին նաւակումն շուարած

իրանց յետին թշուառ վիճակի վերայ:

Աւազակների խորին լուութիւնն գիշերային խորժամանակին կարծէս ազատութեան պատճառ ձեւակերպեց նաւակումն շուարած աւարներին, թէ և Արհաւիրն նաւալվար չ'էր, այսու ամենայնիւ նա Յիշուսաւարաշին խելամուտ հմտութիւններովն նաւակի սուր ծայրի ընթացքը դարձրուց դէպի նորագիւտ Ամերիկայի հողագնդի ծովային եղերքն, ուրանոր բարի պանդոկապետն իր ընկերներովն անդութ ալեքների հետն կպատերազմէին անդադար: Գիշերային անարատ լուսինն և երինքի անթուելի լուսածիծաղ աստեղներն խրախուսում էին աւազակների ձեռքից աղատուած՝ այս մեր նորընծայ մանկահանների սըրտելն. իսկ նաւակն սրնթայ քայլերով լողումէր յաշջողարար Հարաւային օվկիանոսի ծովային ալեքների մակերեսութիւն վրայօք: Վեցերորդ եօթնեակն արդէն լուսնալոյ վրայ էր, երբ հեռուանց երևեցաւ պանդոկապետի կիսակործանն նաւակի մասն, հետզհետէ մօտենալով՝ գտան այդ փոքրիկ մասի վերայ նրանցը մեռածին չափ կենդանի: Վեր առին նաւակի մէջ և Արհաւիրի ձեռքով պատրաստած մննդարար ախորժ կերակրներովն ուժի բերեցին: Պանդոկապետն առաջին անգամն ըստ ճանաչեց Արհաւիրին, յետոյ ուշքը վերայ գալով՝ զրկեց նրան, և համբուրելով նորակարակն շքեղուն երեսն՝ օրհնում էր երկնաւոր հօր

կամքը ասելով . « գոհ եմ Տէր, գոհ եմ Քոյ սուրբ
և նախախամութիւնիցն, որ ծովային դառն մահիցն
և միրկեցիր ինձ իմ հոգեսէր որդիկիս ձեռքովմա: Պան-
դոկապետի միւս ընկերներն, որոնց մինն էր և Ամե-
րիկացւոց տէրութեան առաջին դեսպանն Մազմագամն
ընծայում էին նախախամութեանը իրանց փառա-
բանչական սրտանց նուերներն՝ խորին շնորհակալու-
թիւնով, օրհնում էին Արհաւիրի, Բրաբինի և
Սրաբինի նորածիլ կեանքերը, և դրկախառն սիրով
համբուրում էին նորանց փրկչական մասունքներն:

Երբ ամէնքը ծիծաղ գէմքով, ապահով կեր-
պով՝ մէկմէկու սրտանց սէր կընծայէին, նաւակն իր
սուր ընթացքը շարունակելով՝ վերջին խաղաղական
հանգիստն ունեցաւ Ամերիկայի հողագնդի ծովային
եղերքում: Դեսպան Մազմագամն իսկոյն ճանաչեց
իր ծանօթ երկրի ծառախիտ անտառներն, նորան-
ցում օձապտուտ գետակներն և առուակներն, ուստի
սրտի ուրախութիւնով լուռած՝ իր սիրով կապուած
ընկերներովմ, պատիւ ունեցաւ մտնելոյ արքունի պա-
լատն, իր նուիրական կացարանն:

Ամերիկայի իշխողն դեռ յառաջ լսելով իր
դեսպան Մազմագամի ծովաչեղձ լինելն, սրտի հա-
ռաջանքներով կոծում էր զինքն, և մեծ կորուստ էր
համարում իր տէրութեան ամենահմուտ կառավա-
րիչ Մազմագամի չքանալոյն համար, ուստի այդ

առթիւ ինքն իշխողն, բոլոր զօրքը և ժողովուրդը
մի տեսակ մուգ կապուտ վերաբէու Եին ծածկել:
Յանկարծ ժողովրդական ձայն բարձրացաւ, ամէն
տեղ քարոզում էին Մազմագամի յայտնապէս պալատ
մանեն: Խշողն ինքն, որ այնքան սիրում էր Մազ-
մագամին՝ շատակեց մանել նորա կացարանն, այս զքս-
կեց նորան, համբուրեց ջերմ սիրով, և աւետէք
կարդաց նորա սուդ հազնուած ընտանեացն՝ Մազ-
մագամի անցյս վերագարձի համար:

60439.67

Մազմագամն սկսեց պատմել իշխողն իր ան-
յաջող գէսպքը ասելով « Մէ՛ծ իշխան և Տէր հողա-
« պահին, Ամերիկայի, մինչդեռ Ձեր Տէրութեան հը-
« րովարտակներով նաւակումն նստած կ'ջանայի մուտ
« դործել Աւտորիացւոց բանակն, ծովային սաստիկ
« ալիքներն զրգուուած ալեկոծ հողմունքից՝ բաղնելով.
« նաւակի յետ յառաջ կողմինակի թերին, ձեզ-
« քեցին նորա ներքնատունն, ուստի զնասուած նա-
« ւակն ջրոյ սուզանքով սկսեց խորտակութիւ, զոհե-
« լով իրան հետ բիւրաւոր մարդիկներ: Միմիայն ա-
« նարժան ծառայդ լիծութեանդ այս չորս անձիք-
« ների հետը միտամին (ցոյց տալով իր առաջին ըն-
« կերներին և պանդոկապետին) խորտակուած նաւա-
« կի մի մասն ձեռք բերելով հազիւ թէ կարողացանք
« նորա վերայ մի կերպ մնալ վեց շաբաթ լրիւ, մեռածին
« չափ կինդանի, բայց նախախամութիւնն խղճալով



« Այս անտանելի չարչարանքներին, որ ծովային ան-
« գութ՝ ալեքների վերայ անապաստան պառւտակներ
« կ'կրկնենք, ուղարկեց մեզ օգնելու այս նորածիլ
« միանման մանկահասներին (Հայեացքն ձգեց Արհա-
« ւիրի, Բրաբիոնի և Սրաշիոնի վերայ). սոքա ազա-
« տեցին մեզ, Տէր իմ, ալեքների դառն տանջան-
« քիցն և յաւիտենական անդարձ մահիցն։ Բարի
իշխողն զեռ ուշադրութիւն չէր դարձրել այդ բա-
բելնի երեք մանկունքների վերայ, բայց Մագմաղամի
ցաւալի խօսքերն մեծ ներգործութիւն գործեց
նորա աղնիւ սրտին վերայ, ուստի մօտեցաւ այդ վըր-
կարար չքնարներին և Հայեացքը ձգելուն պէս նրանց
հրեշտակատիպ լուսանկար պատկերներին շուարեցաւ։
Արհաւիրն օրինակ էր իսկապէս այն յաւերժահար-
սին, որ արեգական զեռ նոր արձակած ցողուն շո-
զուններովն պսակուած՝ ծովային թանձր փրփուրների
միջիցն կրաքրացնէ իր մարմարիոն կիսալսնջն կանգ-
նաւչափ. իսկ Բրաբիոնին և Սրարիոնին, որոնց միա-
տեսակ հիանալուն չափ չքնաղ նմանութիւնն զեռ
չէր ծնուած այնպիսի մի սրտես աչք, որ կարողա-
նար միմեանցից զանազանել, նմաննեցրուց փափկական
դրախտում բուսած մշտականաչ խնձորենւոյ մի ոս-
տի վերայ երկու հատիկ միանման՝ միաձաշակ՝ ան-
մահարար՝ կաթնակարմիր խնձորներին։ Երբ իշխողն
հանգստմանքների բուն նպատակն կմտածէր, որ Ար-

Հաւիրն իր մանկական ուժի վերայ յոյս դնելով՝ և
ամենատեսակ անյաջող տառապանքներն մէկ զի ձը-
գելով՝ ահաւելի լայնատարած օվկիանոսն ձգել է չափի
տակ, իր Հայը սպանդոկապետին դառն մահիցն ազա-
տելոյ համար, աւելի շփոթուեցաւ։ Երջանիկ էր Հա-
մարում պանդոկապետին, որ ունի Արհաւիրի նման
զեռ փոքրիկ հասակումն կատարեալ որդի։ Նա իր
հեռատես մորովն նշանառում էր Արհաւիրի մէջ մի
երկնաբաշխ շնորհ. ամէն մի հարցմանքի պատաս-
խանն խմաստնական բառերով Ճիխացած կ'արտասանէր
նա, այնպէս որ ամէնքն կը զմայէին, կը զարմանային
նորա հատընտիր համեստ խօսակցութեան կապերի
վերայ նոր արարած էր անուանվում նա իր գերինական
ներքուստ և արտաքուստ զարդարուած երկնաբաշխ
շնորհքներովն։

Հետեւեալ օրն Մագմաղամի աղթառութեան
առթիւ, իշխանական պալատումն խնձոյք կազմուե-
ցան, հրովարտակներով հրաւիրուեցան բոլոր պալա-
տականքն և իշխանազունքն նորա հոյակապ դահ-
լիճումն գումարուեցան։ Ամէնքը Արհաւիրի չքնարա-
տիպ պատկերին կընայէին, նորա չնաշխարհիկ վայելուչ
հասակի վերայ կը զմայէին, բայց Արհաւիրն՝ պատկե-
րացնելով սրտին մէջ իր սիրելի հայրիկի դառն վի-
ճակը, որ պալատիցն կէս մղոնաչափ հեռի բանդումն
տոչորվում է տասն տարի շարունակ, ոչ մի խրա-

խուսանիք չեմ միսիթարում նորա վերաւորուած փառ
փուկ սրտին, ուստի որոնեց նա մի յարմարաւոր
վայրկեան, յառաջ խաղաց հրաւիրեաների կենդրոնն,
ծնկների վերայ կանգնած իշխանի առջևն՝ մնաց ան-
մռունչ, կ'ուզէր մերկանալ նորա հանդիսականաց
առջևն իր գաղտնիքն, բայց կուսական պատկառանիքն
արգելքներ եմ պատճառում, կ'ախատէր բանալ
հանդիսականաց դէմ իր սրտումն թաղցրած ցաւերի
կապանքներն, բայց արտասուքի հոսանքներն չեմ տալիս
կական խօսելոյ: Իշխողն երևակայեց Արհաւիրի բուն
նապատակն, որ կ'ուզէր յայտնել բացօրէն մի որպիսի և իցէ
դադանիք, իսկոյն կալաւ նորա ձեռքիցն՝ նստեցրուց իր գա
հոյքի վերայ, և խրախուսեց խօսիլ համարձակ, խօստա-
նալով բոլորի առաջ կատարումն տալ նորա ամէն մի պա-
հանջներին: Արհաւիրն սկսեց իր ցաւալի պատմութեան
առաջնակարգն վեր առնել իր հայր Հեղոմին դերի
տանելու օրիցն մինչեւ վայրկենիս իշխողի հետը խօ-
սեն. յետոյ նա իր պատմութեան վերջումն աւելացրեց
հետևեալ խօսքերն դողդոջիւն ձայնով: «Ա.յժմ կը
« խնդրեմ բոլոր ներկայ գտնուած պալատականներին
« և իշխանազուններին, թեկղին նման մի հայրակո-
« րոյս օրիորդի վշտալի ցաւերին կարեկից լինել,
« միջնորդել Մեծ իշխողին ընդհանուր հողադնդին
« Ոմերիկային ազատել նորա հայր Հեղոմ Հայկու-
« նւոյն, որ առան տարուայ շրջանում աշխատում

« է շարունակ տեղւոյս գետնավոր հանքերումն, որ-
« ու պէս զի նորա մի հատիկ դուստր թեկղին գրկէ
« իր վաղուց կարօտացած սիրելի Հայրիկին»:

Արքայն բոլորովին մոլորեցաւ և բոլոր պայտա-
տական հանդիսականներն շիոթուեցան Արհաւիրի
ծպտեալ իրականութիւնն լսելով, ամէնքը մի տեղ
շառապատ հնչեցրին իրանց բարձր ձայներն «ազատու-
թիւն, ազատութիւն»: Ա.յժ Տափահարական, թեկղին
սրաին համապատասխան քաղցր ձայներն դադարե-
լուցն յետոյ, իշխողն կնքեց «Ենորա բոլոր ընկերներին»:
Մինչդեռ կը կարգադրուէր Հեղոմ Հայկունուն և
նորա ընկերներին համել բանդատնիցն, թեկղին վա-
զեց գէպի բանդն, գէպի իր կարօտ հայրիկն և բոլոր պա-
լատականքննորա յետեւից: Բանդապետն մութը բանդի
ամրափակ երկաթեայ բեեռներով ամրացրած դռներն,
որ տարիներով փակուած էին՝ բացաւ և զերիներն
լցու աւեսան: Թեկղին որոնեց իր սիրելի Հայր Հեղոմին
և ընկաւ նորա ոտքերն: Նա՝ որ կարօտ հայրիկի
լանջովն կը փարւում միմիայն վերացական մոքերով,
այսօր յայտնապէս նորա զրկովն փաթաթուած՝ Հայ-
րավինամ սիրտն է միսիթարում, նորա կրած դառն
տանջանքներն է փարատում, նորա մշտական գերու-
թիւնից ազատուելու աւետիքն է կարդում: Հեղոմի
ներկայ զրութիւնն կը նմանէր այն անխնամ ծառին,
որ ձիգ օրերով չոր հողին տակ արձակուած արմատ-

ներն արևուն տաղ խորշակովն կըսկսի իր կանաչ տեւ
լեներովն գեղանալ և թառամիլ: Բայց թեկղիի մրայօն
աղբիւրակների վաղիան արտասուքն թացացնելով իր
հայրիկի կիսաչոր աչքերն, դարձրուց հօր դունատ
երեսին վերայ իր բնական վայելչատիպն: Բիւրաւոր
հանդիսականներին տիրել էր խորին լուռթիւն. ա-
մէսի աչքերն կը դիտէին թեկղիի և նորա հայրիկի
ներկայացրած լացախառն ուրախ տեսարանի վերայ-
չկար այնտեղ այնալիսի մի զգայուն սիրտ, որ չհո-
մէր աչքերիցն ջերմիկ արտասուք. ամէնքի գութը
կը շարժէին այդ անծանօթ հետաքրքիր առարկայի վե-
րայ: Պանդոկապետն, որ ընտրել էր Արհաւերին իր
միակ դստեր Լիզային փեսայ, աւելի կը զարմանար, թէ
որպիսի դաղտնի հնարքներով. նա կարողացաւ իր
նպատակին արժանի հանդիսանալ, ուստի սա սիրոյ
գրդիւներով լուռած՝ յառաջ խաղաց, գրկեց երկու-
սին միատեղ և իր սրտանց բարեկամական ջերմ համ-
բոյը նուիրեց նրանցը: Նոյնը իրազործեցին Բրաբի-
ռնն և Սրաբիոնն, որոնց սրտերին մէջը թափանցուեց
թեկղիի օրիորդական վառվռուն սէրն: Այնուհետե-
աշխոյժ մանկահասներն սկսան վառուել նորա տաք
սիրովն և երկուքն էլ որոշ մոքերով թեկղիի հե-
տը ամուսնանալու մի խորհուրդ կը մտածէին: Բայց
գորանց այդ խորհուրդը կը յաջողուի արդեօք և
թէ ո՞ր մէկին կը վիճակուի նա, այդ ճակատագիրն

ինքն կ'որոշէ ապագայ ժամանակում:
Գերիներն բանդումն ստացած իրանց կրկնա-
մորթուցն մերկացան, մետաքսեայ ալ կապուտ հան-
գելձներով զարդարուեցան և հանդիսականաց հետը
արքունի լնդարձակ դահլիճումն նիստ ունեցան:
Հեղոմն՝ որ տասն տարի շարունակ բանդի անարդ
անկիւններումն և գետնափոր հանքերումն կը տոչոր-
ուէր ժամ յառաջ, այսօր արքունի հօյսկապ դահ-
լիճումն պալատականաց հետը սեղանակից է իշխողի:
Հեղոմն, որ բոլորովին յուսակառուր էր ստանալց իր
սիրելի զաւակիցն գէթ մի լոկ տեղեկութիւն, այսօր
նա զրկախառն գգուանօք համբուրում է նորան:
Այն գերիներն, որոնք անցուդարձողներիցն ստանում
էին թքանաց անարդանքներ, այսօր արքունիքումն
պատուակից են իշխողի, նորա սիրելիներիցն լնդունում
են յարգանաց պատիւներ: Վերեկից երկինքն իր լու-
սեղէն հրեշտակներով և լուսածիծաղ զարդարուն
առարկաներովն, իսկ ներքեկից երկիրն իր զգայուն
ողիներովն և մուգ կանաչ ծառատունկներովն, բաց
եին արել այդ օրն հրձուանաց առագաստներն և ծա-
փահարելով կը զուարձայնէին բոլոր հանդիսականների
զգալի սրտերն և Բրաբիոն ծաղիկն, որ իր զայելու
զունովն և դրախտային հոտովն կը զմայլեցնէ ամէն
մի մարդոյ զգայուն միտքն, այնպէս և թեկղիին փունջ
ծաղկի նման՝ հոտ առնելով մէկ մէկու կ'ընծայէին,

և կը զուարձանային նորա հրեշտակա՚ան գէմքի վը-
րայի գեղածիծաղ ժալիտներովն:

Կայծակնասլաք երկաթեայ լսրերն իրանց
բարեհամբաւ լուրերովն մէկը միւսի ետեկց զուար-
ձական աւետիքներով ուրախացրին նոյն իսկ օրն
չեղոմի սուդ հաղնուած կնոջն. նորա ձիգ տարինեւ-
րով տխուր տնախն սկսեց դարձեալ իր առաջուայ
շքեղ նախատիպն ստանալ. այնպէս էլ պանդոկապե-
տի, բրաբիոնի, Սրաբիոնի և միւս գերիների վայակոծ
տնախներն ուրախութիւնով լցուեցան:

Դիսպան Մազմագամիցն սկսած մինչև յետին
պալատական իշխանազն հետեւաբար կատարեցին մին-
չանդէսն, շարունակ երեք ամիս, այնուհետեւ
հեռաւորքն պատրաստուեցան դառնալ իրանց հայ-
րենիքն:

Բրաբիոնն և Սրաբիոնն, որոնց սրտերն անհամ-
բեր վառքում էին թեկղիի սիրոյ տաք կրակովն՝ մէկը
միւսի դեռ բուն նպատակն չհասկացած, որոշ որոշ
թեկղիի հետը առանձնացած՝ կառաջարկէին նրան
իրանց սրտի գաղտնիքներ.... հաղորդելով՝ առաւեւ-
լապէս գութն շարժելու համար, որ եթէ թեկղին կը
կարդայ նրանցը իր բացասութիւնը, նորանք սիրոյ
գրդիոներից ստիպուած կը յօժարին ինքնադռհ լինել
լսյնաբերան անկուշտ օվկիանոսումն: թեկղին նայելով
այդ երկու հրեշտակամին մարմինների զրոյթեամաւ,

որ զրաւուած են արդէն իր սիրովն, և մտածելով
նրանց ապագայի վնասներն, անձնատուր եղեւ, ցոյց
տալով ամէն մէկին առանձին իր ինքնայտար կամքն,
ուստի իբրև զբաւական՝ թոյլ տուեց նրանցը քա-
ղել իր լուսանկար կաթնակարմիր երկու այտիցն,
մէն մի ջերմ համբերը: Բայց որովհետեւ վերջիններն
պէտք է նաւելին իրանց հայրենիքն որոշ ձանապարհ-
ներով. ուստի թեկղին, տալով այդ երկու սիրահար-
ներին առանձնապէս իր անսօւտ խոստմունքն, պատ-
ուիրեց, որ նոքա նախապէս գնան իրանց հայրենիքը
և ծնողաց բարեհաճ կամքն առնելուցն յետոյ, վե-
րադառնան իր հօր Հեղոմի երկիրն հաբնախօսութեան:

Արբունի նաւակներն պատրաստուեցան և հե-
ռաւորքն իրանց հրաժարականն մէկ մէկու կարդալուցն
յետոյ, արբայալսյել պատուով նաւակների առա-
գաօտն բաց արին: Պանդոկապետն և Հեղոմն իր աղ-
նիւ թեկղիի հետն գնում էին մի նաւակով, իսկ
բրաբիոնն և Սրաբիոնն միւս ազատուած գերիների
հետը գնում էին առանձին նաւակով, առաջինքն
թեկղիի վաստակած աւագաների հարստութիւնովն
զիմաւորեցին գէպի Հեղոմի երկիրն, պանդոկապետի
քաղաքի մօտովն, իսկ վերջինքն գէպի իրանց հայրե-
նիքներն՝ որոշ ձանապարհներով:

Մինչդեռ Հեղոմի նաւակն կը լողայր ընդարձակ
օվկիանոսի վրփրատած ալիքների վըայօք, թեկղին ըն-

կաւ պանդոկապետի ոտքերն և նորա աչքով տեսած
հանգամանքներն յիշելուցն յետոյ ներողութիւն կը
խնդրէր պանդոկապետիցն, որպէս զե յանցանքներն
մասնաւոր թեթևանան, ըստ որում իրան ձեւակեր-
պելով պատանեակ՝ նշանուեցաւ նորա լիզայ միակ
դստեր հետը, բայց միւնոյն միջոցին՝ նորա սրտիկն
ըստ կոտրելոյ համար, նա խրախուսեց ասելով «չը կար-
« ծէր թէ լիզայի հանդիսակատար նշաղրութիւնն
« իմ պատճառովս լրւծուեցաւ, ոչ, նա արդէն ունի
« այնպիսի մի արժանաւոր փեսայ, որին չէր զանա-
« զանել իմ փեսայիցն, որին նախախնամնութիւնն
« ընտրել է և ինձ համար»:

Նեղո՞մ՝ որ այս հանգամանքներիցն դեռ բոլո-
րովին անտեղեակ էր, սուր ականջներն վայր թողած
կը լսէր ամէնն և կը զարմանար թեկղիի այդքան
հնարագէտ քաջադրութիւնների վլրայ. թէ ի՞նչ
գոհունակ սրտով, առաքինի գործքերով նա Աստուած
էր փառաբանում, դորա կշռի չափն մնում է ըն-
թերցողին իմանալոյ:

Որեն և զիշելներն իրանց շրջանական պարտ-
քերն էին կատարում և նաւականներն իրանց անկեղծ
բարեկամական սէրն միմեանց հետ փոխարինելով նա-
ւակին իր գերջին կանգն առաւ պանդոկապետին պատ-
կանեալ և... քաղաքի նաւահանգստեան տեղն, ու ըստեղ
օր յառաջ գումարուել էին քաղաքի ընդհանուր

ժողովուրդն, պանդոկապետի կինն և նորա նորախօս
նազելի լիզայն, որն որ շտապում էր իր փեսայ Ար-
հաւիրի հետն մի վայրկեան յառաջ սիրակից հան-
դիսանալ: Հեռաւորներն դուրս եկան ցամաք, և մեր-
ձաւորներն յառաջ խաղալով կ'ուզէին զրկել նրանցը,
բայց պանդոկապետի կինն միայն իր նպատակն յա-
ռաջ տարաւ՝ գգուելով իր սիրելի ամուսնոյ հետը,
որին մի քանի օր յառաջ մեռած կը համարէր:
Շուարած լիզայն մի կողմն կանգնած կը դիտէր զար-
մանալի մտքով Արհաւիրի փայլուն պատկերն և չէր
համարձակում մօտաւորիլ նորան, որովհետեւ թեկղիի
զրային այս անդամնեմն օրիորդական հանգերձ կը
տեսնէր նա: Թեկղին մօտեցաւ զրկեց լիզային, համ-
բուրեց նորա մսրմարիոն երեսն և ձեռքերն, նորա
կիսլանջովն պատած, ասաց նորան ցածր ձայնով «մի
« տրտմիր իմ սիրոյս ընկեր, գարձեալ երկուքս ան-
« որոշ պէտք է մնանք և մի տնակում հարսնական
« խաղաղ օրեր պէտք է վայելենք. նախախնամնւ-
« թիւնն արդէն ընտրել է մեզ համար փեսաներ՝ մի-
« անման զեղեցիկ: Յետոյ ձեռքիցն բոնած առանձ-
նացան մի կանաչ տերևախիտ թզենւոյ տակ, սկսեց
պատմել նորան իր պատմութեան հետը խառն՝ և
բրաբիոնի և Արարիոնի վառվառն սէրն, որ թեկղին
նորանցից բաժանուելու ժամանակը բերել է իր հետ
համարեա նորանց կենդանի սրտերն....

Ամբոխն ծավահարական հանդէսով առաջնորդեց նորանիներին մինչև պանդոկապետի նույնական կացարանն:

Հեղոմ Հայկունոյ անմիտիթար կինն, որին իր ամուսնոյ անդառնալի բացակայութիւնն բաւական չէր, անյայտացել էր և նորա մի հատիկ զուստը թեկին, գեռ Ամերիկայից խիստ ողջունաբեր հեռաց զիրն ստանալու օրից Հեղոմի հաւատարիմների հետն արդէն արագ ընթացքով չափում էր ճահապարհներն դեպի և... քաղաքն, կ'ուզէր օր յառաջ իր սիրելիներին զրկել, իր սուր սուսերներով խոցուուած սրտին փարասել և իր վաղուց կարօտացած փափաղն լցնել:

Երբ պանդոկապետի հարուստ տունն բազմականներով լցուած էր կատարէին նորա վերադարձի ժոխ հանդէսն՝ գաւիթն նորիցն սկսեց ծփալ խուռն ամբուսով: Հեղոմի կինն աղաղակում էր բարձր: «Ճուէ՛ք ինձ առնուլ իմ վաղուց կորցրած ամսւսինս, «բերէ՛ք ինձ դրկել իմ անուշ թեկին, աղաղողն «մահիցն իր քաջ ճնողին:» Ներքնականերին և արտաքիններն շփոթուեցան այդ անսովոր աղերսալի ձայնի վերայ, Հեղոմի կինն յարձակուեցաւ իր քաղցր ամսւսնոյ և քնքոյշ դատեր վերայ ինչպէս ձագակորոյս ոչխարին երկար բառանչելով վերջապէս կդանի իր կորած նորածին գառնուին: Կա բարձրա-

նալով կը փարուէր նրանց լանջովն, և յածրամնուով կը թռչէր նրանց ոտքերն իր աչքերի զետակահոս արտասուքներովն: Երկինքն հրեշտակներով և երակիրն զգայուն մարդիկներովն միմեանց հետ ողջունաբեր տեսաբան կը ձեւակիրպէին, արևզակն կանգ առած անշարժ կը ծիծաղէր ուրախական ժողովներով այդ երջանիկների հետն:

Ուրախական հանդէսներ կատարելուցն յետոյ, պանդոկապետն, իր կինն և քնքոյշ Վիլայն փառաւոր հանդէսով ճամսագարհորդեցին Հեղոմին իր սիւրելիների հետ միասն մինչև նորա բնակութեան տեղն, Հեղոմի երբեմն անզարդ կացարանն: Բայց Հեղոմն և երախատագէտ թեկին գեռ քաղաքն ոտ չը կօխած, մտան քաղաքիցն գուրս ճանապարհի վերայ փաքրիկ քարաշէն եկեղեցին, ուր որ թեկին ստացել էր իր մտքի աներեսոյթ լուսաւորութիւն: Յեկիլն առաջին անզամից աւելի իր սրտանց գոհունակութիւնն ուուիրելով քաղցրիկ Ցիսուսին և նորա կուսածին մօրն, մտան քաղաքն: Ամբոխի հրձուանաց ձայնիցն քաղաքն սկսել էր դղողալ, քնարների ներդաշնակ հընչումներն կը զմայլեցնէին լսողաց զգայուն սրտերն: Հեղոմի քաղաքն այդ միջոցին ստացել էր փափկական եղնայի ձեւ: Երկար ժամանակ այնտեղ զիշերն մօտենալու իրաւունք չ'ունէին: Լուսնի փու-

խարինն մշտավառ չահերն կը ծառայէին։ Հեղոմն
արդարեւ ստացաւ իր պետական ասպետներն, աւելի
պատոյ արժանացաւ տեղական վահմ Արքոյի շնոր-
հիւն, այնուհետև խաղաղ կեանք և ու բախ օրեր
կ'երեւին չեղոմի, իր կողջ և անոյշ թեկուի
առջևներն։



ԹԵՂԻ

ԲԱՅԱՆՈՒՄՆ ԵՐԿՐՈՌԴ

Երաբիոնի, Սրաբիոնի և սրանց գերութիւնից
ազատուած տասն ընկերների նաւակի վերայ միու-
թիւնը փոել էր իր հովանի թեքերն, ուստի նաւակն
ամենայաջող կերպով լողում էր ծովային մակերե-
ւութին վրայով դեսի նպատակն։ Առաջին երկու
եղբայրներն իրանց զգայուն մոքերի համարեա մէծ
մասն ընծայել էին արդէն թեկլի սիրուն և նրանց
զվարար խօսակցութեան առարկայն միայն թեկլին
էր, նորա հրեշտականման լուսավայլ սպատիւրն էր,
նորա կամքնակարմիր այտերի համբոյրն էր, որ բաշ-
խել էր նրանցը իւրաքանչիւրին առանձին։ Խակ վեր-
ջիններն, որոնք թեկլի շնորհիւ ազատուել էին մշտա-
փակ մութը բանդիցն, անժամանակ գառն տանջան-
քիցն, դատողութեան տակ էին ձգել, թէ ի՞նչ
կերպով վարձահատոց լինեն թեկլի լաւութեան
փոխարինն, սրտանց ու խոնցին Նախախնամութեան

տնմա՞ անունովն, որ իրանց հայրենիքն դնուուցին յետոյ, վերադառնան իրանց ընտանիքներովն թեկողին տնակն, ստրկական պաշտօն վարելու, նորա անչափ երախափիքն ըստ մոռանալու համար:

Որովհետև ամէն մի յաջող միջոցների հետը կապ ունեն և անյաջող գէպօքերն, նաւակն փոխանակ տանելոյ այդ ուրախ նաւակամններին գէպի բուն նըստատակն, իրանց կարօտ հայրենիքն. առաջնորդեց նպատակին հակառակ մի այնպիսի անմարդաբնակ կղզի, որ բոլորովին անծանօթ էր երևում նրանցը: Արբ նաւակիցն դուրս զալով ցամաք, կ'ուղէին հետապքքիր լինել այդ հողագնդի համար, դիմաւորուեց նրանցը այն կղզիի բնակիչներից մէկն զարհուրելի դէմքով: Նորա ամէն մի մարմնական մասունքներն բոլորովին չէին համապատասխանում մարդկութեան օրինակին: Կա ունէր իր լայն երեսին վերայ մի հատ բաւականին մեծ աչք, չորս անկիւնի, երեսի ներքին մասիցն կզած ունէր բուն ծնոտի տեղն բնիքնարոյս մսեայ փուչիկ գնդաձեւ, բերանն ապաշնորչ լայն, քթի ծակերն կարելի էր ձեւակերպել դաղանների ապատանարան, նորա ահռելի տգեղ գէմքն և լայնաթիկունք կոպիտ հասակն ճանապարհորդների սըրտերնին գուշակեց մի անբաղդութեան հետևանք, կամեցան յետ գառնալ, մանել նաւակն, բայց այդ զգուելի հրեշը կալանաւորեց նրանցը, հարկիւ մղեց

մի խաշանց փարախ, զլորեց զրան դէմն մի մեծ տափարակ քարաժայու և ինքն հեռացաւ:

Այն գերիներն, որ բաղդի բերմոնքով ազատուել էին անժամանակեայ գերութիւնից, և ուրախ կը շտապէին ոտ կիսել իրանց հայրենիքը, որպէս զի սուգ հազնուած ընտանիքների սրտերն շահեն, հիմայ թիւր բաղդի պտուտանըներով մի աննշան հրէշի ձեռքով կալանաւորուած ահարկու զողով գուշակում էին իրանց առջեն մահառիթ վտանգաներ: Բրարիսնն և Արարիսնն, որոնք մի ժամ յառաջ թէկղի ջերմ սիրոնի վառուած ուրախ սրտով աշւիատում էին օր յառաջ իրանց բուն նպատակին հասնել, այժմ գոնափակ փարախումն՝ ձեռքերն կաշկանդուած, անէծք էին կարզում իրանց անբաղդ վիճակի վերայ: Երկար աշխատեցին փարախի դռնաքարն փոքր ինչ շարժել, որպէս զի նորա ներքնածերպովն կարողանան մի կերպ աղատութեան հնարք որոնել, այսու ամենայնիւ քարն իր ծանրութեան չափ անշարժ էր, ուստի նրանց աշխատութիւնն չունեցաւ նպատակի հետևանք: Ժամի երեքն էր հրէշն վերագարձաւ, բերելով իր հետը և հինգ իրան նման հրէշներ: Մտան փարախն, առին այդ ինքնազոհ տասն երկու անմեղներին և տարան իրանց բնակութեան տեղն, բաժանեցին դորանցը, իւրաքանչիւր հրէշնն ընկան բաժին երկու ողի: Յաջողաբար Բրաբիսնն և

Սրաբիոնն վիճակուեցան մէկ հրէշի: Ամէնքը երբ տեսան հրէշների կացարաններումն մարդոյ ոսկորներ, ողնախաղեր, ազատութեան յոյսը հեռի գնաց նրանց մտքերիցն մղններով, բացի դորանցից՝ հրէշների կացարաններումն կային և ուրիշ կենդանի զոհեր, որոնք դարձեալ ինքնուրոյն կարթիւ մատնուած էին մարդակեր հրէշներին, այդ առթիւ դրանց զոհելոյ օրերն պէտք էր որ մի միջոց տեէին: Ծովալնկղմած մարդն ալէքների հետ պատերազմ կը բանայ, և ձեռքերն այս կողմն այն կողմն կը ձգի որպէս զի մի կերպ ազատութեան ձանապարհ որոնի, այնպէս էլ կեանքի վերջին կետի վերայ գտնուած այդ թշուառականներն, մինչդեռ հրէշների անկուշտ որովայնին կերակուր չէին դառել, բոլոր մոքերն մի տեղ ժողոված կը մտածէին իրանց զլսի ձարն շանելու:

Թեկղին այդ միջոցին իր ծնողների քաղցր սիրովն շաղաղուած, դորանց ամէն անցածող դէսքերն զդում էր ջիսուսաբաշխ անպատմելի շնորհիւն և նրանց ամէն մի խորհրդական խօսակցութիւններին հաղորդակից էր համարեայ. նա իր նուիրական կացարանումն բազկաթոռի վերայ նստած, նրանց վըրայօք անցքերն նկարագրում մի առ մի: Տիրութիւնն չէր ներգործում թեկղին սիրաբորբոք սրտիկի վերայ, որովհետեւ նա չէր երևակայում իր սիրելների առջևն որպիսի և իցէ մահագուշակ վտանգ:

Արաբիոնն տեսնելով, որ հրէշներն ամէն զիշեր բացակայում են իրանց կացարանիցն, երեխ մարդիկ որսալու, ուստի մի հանդարտ զիշեր բրաբիոնի կարեցութիւնովն, հուպ տուեց իր ուսագլիներին և նուրբ բարակ մարմինն անձուկ պատուհանիցն զուրս հանեց, վաղեց փակ դրան կոճակին յետ արեց դրսի կողմիցն: Դուրս վաղեց բրաբիոնն և միւներն, կրկն դրան կոճակին վերայ զնելով. բաց արին և միւս զըռներն, որտեղ իրանց ընկերներն փակուած էին. Նրանց հետերնին զուրս վաղեցին և միւս ինքնուրոյն մատնուած զոհերն, ամէնքն միատեղ յետ յառաջ նայելով, մերթ սրտի ուրախութիւնով լցուած, մերթ ահ ու երկիւղով պատած զնում էին, մինչև հասան ծովային եղերքն, ուր տեղ սպասում էր նրանց պատրաստի նաւակին:

Գիշերն՝ երբ իր մութը վերջին վայրկեաններին մէկդի ժողոված լուսոյ շառաւիխների հետն սկսել էր մաքառել, հրէշներն դարձան իրանց կացարանն, որսածներին դարմանելու համար, որպէս զի աւելի զիրանան, բայց նրանց գաղափարին պատճառեց մի անսովոր շփոթմնունք: Երբ տեսան դռներն փակ, ներսնատներն դատարկ, վաղեցին ծովային եղերքն, նաւակի տեղն տեսան դատարկ. անկարծիք զդացին նրանց յաշանի փախչին և ստիպուած պէտք է, որ հետեւին նաւակի ետևից, ըստ որում այդ զոհերն

Հրէշների որովայններին մի առժամանակեայ համեղ կերակուր էին խոստանում: Որովհետեւ հրէշներն հմուտ էին ծովային պատուակներին, ուստի վեցն էլ միասին և միանուագ մոտան ծովին, մերթ ջրի տակովն, մերթ նորա մակերեւութին վրայով, պնդեցին նաւակի ետևիցն, նաւակի սուր ընթացքիցն երեք անգամ աւելի սրնթաց կը լողային անդութ ալիքների վրայովն: Նաւակն հազիւ թէ մազապուրծ էր վտանգից, երբ հրէշների ձեռքերն և ոտքերն արագ շարժելու առթիւ, սկսեցան դադարիլ և հետզհետէ յետ մնալ: Նաւակն ազատուեց այդ մահագուշակ որովայթներիցն և այնուհետև մեծ զգուշութիւնով շարունակեց իրանց ուղիղ ճանապարհն: Այս անգամ նաւակն ստացաւ ուժային գորութիւն, աւել լանալով նորանում ևս տասն ողիներ, որոնց ամբողջութիւնն եղեւ քսան և երկու:

Այն աւազակների խումբն, որին Արհաւիրն, Բրաբիոնն և Սրաբիոնն Գիրբալտարի նեղուցին մօտ, ծովային եղեքըումն գիշերային թանձր քնոյ մէջ թողած աւազակների նաւակովն և բոլոր հարստութիւնովն փախել էին, դեռ այն օրից սկսած կը պտըտէր ծովի երեսին, մէկ որ իր աւազակութեան պաշտօնն էր յառաջ տանում, և երկրորդ իր կորցրած նաւակի հարստութիւնն ձեռք բերել կը ջանար: Յանկարծ զիմառուեց այդ հրէշների ձեռքից աղաւ-

տուած քսան և երկու նաւականներին, թէ և մոտակրուեց պատերազմել նրանց հետը, բայց զգալով իր սակաւաթիւ տկարութիւնն, ըստ որում ինն հողի էին, սկսեց հեռանալ: Բրաբիոնն և Սրաբիոնն իսկոյն և եթ ձանաչեցին այդ աւազակներին, ուստի այդ երկուսի խորհրդական հրամանովն ամէնքը մի աեղ իրանց պատրաստի զէնքերովն փակեցին աւազակների նաւակի դէմն և նորանցը կալանաւորեցին: Այդ միջոցին աւազակների գնդակից միմիայն մի հողի վերաւորուեց, որն որ մի քանի ժամերիցն յետոյ կարգալով իր մահուան վերջին կտակն՝ հողին փշեց և օվկիանոսի ծոցումն ժառանգեց իր համար հանգիստ գերեզման: Աւազակների ձեռքերը, ոտքերը ամուր կաշկանդած կուգէին օվկիանոսի լայն որովայնին կերակուր տալ, բայց նրանց արդար խղճերը յանդիմանում էին մի այդպիսի խղճի ընդդէմ գործին ձեռնամուխ լինել, մասսաւանդ երբ կը տեսնէին, որ աւազակներն սրտանց խոստանում էին նրանց ամէն մի հրամաններն անմերի կատարել: Նրանց աղերսանիքը, աչքերի գետակահօս արտասուքը, որ ծովին համարեայ ուժ էին տալիս, աւելի շարժեցին նաւականների սրտերն, ուստի իրանց թիւր մոքերին խափանումն տալով համաձայնուեցան թողուլ նրանցը նաւակումն և այժմ նաւակն ունեցաւ ամբողջ երեսուն ողիներ:

Սրաբիոնն, որին ամէնքը նորա ձեռքով ազատաւ ուելոյ առթիւ հպատակ էին, կարդաց մի բարենպատակ դիտաւորութիւն, մարդակեր հրէշներին վերաբերեալ, զիցուք թէ, շարունակեց նա, Նախախնաւ և մութիւնն մի կերպ ազատեց մեր անձը այն տգեղ և հրէշներիցն, որոնց կացարաններումն յայսնի կը և տեսնէինք մեր աչքերովն շատ մարդիների ոսկոր և ներ, որոնք արդարեւ կերակուր էին եղել նրանց և անգութ որովայններին, և ո՞ զիտէ թէ որքան մարդիկ և նոյնպէս զոհ պիտի լինեն նրանցը այսուհետեւ: և ժողովեցէք զեր ուժն, կարողութիւնն և դառնանք և նրանցը կորուստ մատնենք: Ամէնքը համաձայնեցան, բայց աւազակներն, որոնք աւելի հմուտ էին հրէշների կենսական քաջ դրութիւններին՝ պատասխանեցին, մենք երեսուն ոգիներովս նրանց յաղթել չենք կարող, բայց եթէ կը կամենաք որ այդ դժուարին յաղթութեան զործն յառաջ զնայ, հրամայեցէք վեր առնել մեղ հետ և մեր ընկերակից հարիւր երեսուն ոգի աւազակներին, որոնք մեր իշխանութեան տակն են գտնուում այժմ, և մեր աւազակութեան հետը կապ ունին. այն ժամանակն կարելի կը լինի, որ այդ սրբազն մտադրութիւնն յաջող կատարումն ունեանայ: Սրաբիոնն կրկնեց, այժմ որտեղ են զեր ընկերներն. համարեայ պատրաստ են, պատասխանեցին աւազակներն: Նաւականների սրտերին երկիւղն պատեց,

ըսկըլ նրանց ընկերների քանակութեան թիւն և ամէնքն կարծես զունաթափուեցան: Սրաբիոնն իշխանական ձևերով առաջարկեց աւազակներին հետեւալ հարցերն: Դուք սրտանց կը խոստանա՞ք, որ զեր ընկերներովն հաւատարիմ լինէք ինձ ամէն մի անյաջող դէպքերում և կը կատարէ՞ք իմ տուած հրամաններն անթերի: Այո, այո, խոստացան և երդուեցան իրանց բուն հաւատոյ հիման արմատներովն մնալ հլու և հաւատարիմ մինչև իրանց արեան յետին կաթեների հոսիլն, ուստի և Սրաբիոնն խօստացաւ աւազակներին իրանց հարիւր երեսուն ընկերներովն միասին վեր առնել իր հովանաւորութեան տակն, տանել նրանցը իր հայրենիքը և այնտեղ նուիրել նրանցը բնակութեան տեղի մի արդաւանդ հող, և իրախուսեց մի քանի աղդու խօսքերով հեռանալ այդ աննպատակ աւազակութեան գործերիցն, որոյ արդիւնաւոր պատողն շուտահաս գնդակի մաշն է: Աւազակներն իրանց սրտանց գոհունակութիւնն ուուիրելուցն յետոյ, նաւակի ընթացքը դարձին կողմնակի, դուրս ելան ցամաք: Խսկոյն գետնափոր տնակներիցն զուրս վազեցին աւազակների ընկերներն, որոնք արդարեւ հարիւր երեսուն էին լրիւ: Կուզէին սովորականին պէս յարձակուիլ նաւականների վերայ, կարծելով թէ և սորանք զոհուած կը լինէին ընկերների ձեռքովն, բայց աւազակապետն իր արիւնա-

շաղախ աչքերովն զգուշացրեց ընկերներին հեռու
մալ, յայտներով ամէնին հանգամանքի պատճառ-
ներն, ուստի այդ պատւոյ արժանի բարեգութ հիւ-
րերին ընդունեցին բարեկամական սիրով, և ամէնքը
միաբերան խոստացան սրտանց հպատակել Սրաբիոնի
ամէն մի յանձնարարական հրամաններին: Այժմ
Սրաբիոնն և Բրաբիոնն հարիւր յիսուն և ուժն
քաջ ողիների պետ են անուանուում:

Վորանեկներն քանի մի օր այդ թանձր ծառա-
խիտ ծածկուած կղզիումն հանգիստ առնելուցն
յետոյ, Սրաբիոնի կարգադրութիւնովն ամէնքը շտապ
գինաւորուեցան հրացաններով, ատրճանակներով և
և կորիչ սրերով, պատրաստեցին թուռվ ութն նա-
ւակներ, իւրաքանչիւր մէկ նաւակումն զետեղուեցան
քսան ողիներ, և նաւեցին միւնոյն ծովագնաց ձա-
նապարհովն գէպի մարդակերների կղզին: Երբ նրանք
մօտեցան այդ անբաղդ հրէշների թագատեան տեղին,
եօթն նաւակներն ծածկուեցան ծովային եղերքումն
մի ծառախիտ ծածկուած տեղում, իսկ միւս նա-
ւակն ծովի երեսին մի յայտնի տեղում, ծովային
ալիքներովն շարունակում էր իր դանդաղ ընթացքն:
Հրէշները, որոնք թէւ այդ միջոցին գարձեալ քա-
ռասուն և երկու ողիներ որսած էին, բայց իրանց
կորցրած զոհերի համար աւելի բորբոքուած էին և
իրանց մոքերնի հետը կը մաքառէին արդէն, տեսա-

նելուն պէս յայտնի տեղում նաւակին պնդեցին նո-
րա յետեից, նաւակն փախուաս գարձաւ, միւս նաւակ-
ների յառաջ խաղաղով շրջապատեցին հրէշներին
ինչպէս ձուաչտի կարկտի անթուելի հատերն մէկ
մէկի յետեից բարձրիցն կը թափուին հասունացած
ցորենի հասկերի վերայ, այնպէս նրանց վերայ թափ-
ուում էր ամէն կողմից նաւականների գնդակների
պատիժ—պատուհան: Հրէշներն հարիւրաոր տե-
ղից վերաւորուած ոուզեցան ջրի տակ: Զուրն իր
բնական կապուտ գոյնն արիւն փոխարկեց: Նաւակն-
ներն այդ միջոցին սկսեցին զատուիլ միմեանցից:
Հրէշներն ծովի տակին իրանց հանգիստն առնելուցն
յետոյ նորից դուրս եկան ջրի երեսն, ամէնքը կիսա-
ուժ քաշ ընկած նաւակներիցն կուզէին շրջել, բայց
նրանց ձեռքերն սուր սուսերներով կորատուեցան և
չարաչար սպանուեցան և նաւականներն համարձակ
դուրս ելան ցամաք: Սրաբիոնն իր քաջերի հետը
մտաւ հրէշների կացարանն և գտաւ նրանց ամէն
մէկի ներքնատանն փակուած եօթն ողիներ, որոնցը
ազատելուցն յետոյ ժողովեցին զոհ եղած մարդիկ-
ներիցն մնացած բոլոր հարատութիւնն և դարձան գէպի
Սրաբիոնի և Բրաբիոնի քաղցր հայրենիքը

Այդ կղզիումն կար մի տեսակ մահամթափ ծա-
ղիկ, որոյ սեպհական նշանակութիւնն միայն աւա-
զակապեան զիտէր և այդ ծաղիկ հոտովն հրէշներն

Երբեմն անմահ էին համարում: Աւազակապետի
խորհրդովն Սրաբիոնն վեր առաւ իր հետը այդ
ծաղկիցն մի փունջ:

Այս վերջին անգամն նաւակներումն գետեղուած
էին երկու հարիւր ողիներ, որոնք բոլորն Սրաբիոնի և
Բրաբիոնի հրամանների ներքոյ էին. վաճն որոյ նաւակ-
ներն շարունակումէին իրանց ընթացքը աներկիւղ: Իսկ
նոր ազատուած քառասուն և երկու ողիները, որոնք
հրէշների անգութ որովայններին պէտք է կերակուր
դառնային, Սրաբիոնի ոտքերն փաթաթուած դարձեալ
կը խոստանային նորա հայրենիքումն ստրկական պաշ-
տօն վարելոյ մինչեւ իրանց մահն:

Սրաբիոնն և Բրաբիոնն իրանց քաջ արի զօր-
քերովն ամենավայելուշ կերպով զինաւորուած մեծ
հարստութիւնով հասան իրանց ցանկալի հայրենիքը:

Վահրամն՝ Բրաբիոնի և Սրաբիոնի ալէզարդ
հայրն, հեռագիրն ստանալու օրից սպասում էր իր
սիրելի որդիկերանց գալստեան. բայց նորանց այդքան
երկար ժամանակ ուշանալու պատճառաւ, նա յու-
սակտուր եղած հիւանդ էր, մահուան վերջին կտակն
էր կարդում: Երբ Բրաբիոնն և Սրաբիոնն իրանց
քաջ արի զօրքով մասն քաղաքը, քաղաքը դը-
ղրդաց զօրքի քայլափոխութիւնից. նրանց փայլուն
զէնքերն ձևակերպում էին մի պատերազմական երե-
ւոյթ, այնչափ որ ոստիկ սնութիւնն կը ջանար լրտեսների

միջոցաւ փակել զօրքի առջևն: Նրանք արդէն մտան
հիւանդ վահրամի կացարանն, որն որ մարմնական
ուժից ընկած, փարթամ անկողնոյ մէջ պառկած
իր մեղքերն էր քաւում. իսկ Բրաբիոնի և Սրաբիոնի
սղով շուարած մայրիկն մի տխուր անկիւնում բազ-
կաթոռի վերայ նստած իր անյայտացած որդիքն էր
կոծում, իր մօտումն պառկած մերձ ի մահ անմիսի-
թար ամուսինն էր ողբում: Այդ երկու փրկարար
հրեշտակներն մօտեցան վահրամի մահճին, տուե-
ցին նրան հոտոտել մահաթափ ծաղկի փունջն:
Վահրամն առողջացաւ նոյն վայրկենումն, փաթա-
թուեցաւ իր սիրելի զաւակներին, տխուր անկիւնիցն
դուրս վազեց և տրատում մայրն և ինչպէս կաթնակեր
գառներն փակուած փարախիցն ողջն մի անգամ
դուրս կը վազեն իրանց մայրերին որոնելու և նրան-
ցից կենսական սնունդ ստանալու, այնպէս էին փա-
րուել մէկ մէկու և կը ջանային իրանց կարօտ փա-
փագն լցնելոյ:

Ժամ յառաջ հոգեոր դասն պատրաստուել
էր եկեղեցական զարդերով վահրամի Ճոխ դագաղի
վերայ մահուան վերջին կարգն կատարելոյ, սակայն
նա բոլորովին առողջ իր քաղցր զաւակների հետն
միւտորուած ուրախութեան մէջ կը տեմնուէր, նորա
հալումնշ մարմինն արդէն ցոյց էր տալիս յաղթան-
գամական հզօր ուժն, նորա կերպարանքի վերայ գէթ

մանաւոր տկարութեան նշան չ'էր նշմարւում, այն տիսուր կացարանն, ուր մտնողի սիրտն դառն հառաւ չանքներով կը տուզորուէր, նորա չորս անկիւնումն յանկարծ կը տեսնուէր Յիսուսանուէր զարնեայ պրաւակներ: Վահրամի գաւակների օտար երկրներում ուսում տանելու առթիւ տամն և ութն տարին այդ օրն էր լրանում, երբ իրանց հայրենիքն ոտք կոխեցին և այդ երկար շրջանում բեռ առաջին անշ գանն էր, որ կարօտ ծնողներն տեսան միատեսակ սիրունների երեսներն:

Խնչպէս հիւրատունն կ'ընդունի իր մէկ զոնիցն զանազան մարդիկ, որոնց քաղցը յագեցնելոցն միւս դանիցն կ'ուղեղորի ճանապարհ, այնպէս էր և հարուստ Վահրամի տունն. ուստի նա կամաւ իր վերայ կրեց հիւրնկալութեան այդ սրբազն պաշտօնը հիւրասիրել մուտ և ել անողներին մեծ յարգանքներով և ոչ մի պահասութիւն չ'էր զգում նա, որովհետեւ նա լի էր հարատութիւնով, մանաւանդ Յրաբիոնի և Սրաբիոնի վաստակած հարստութիւնն այնքան անթուելի էր, որ կարելի էր ասել ամբողջ աերութիւն կը գնէր. հրձուանաց հանդէսը երկար տեսեց: Վահրամի և նորա ընտանիքի հետն ուրախակից էր քաղաքի բարձր գան, նրանց միատեսակ գեղեցիկ գաւակների սէրը, խելքների հմտութիւններն արդէն զրաւել էին զիմացիների սրտելն,

Հազարաւոր մոքեր զբաղուած էին այդ զոյդ հրեշտակաձև մարմինների վերայ և կուզին ամէն կողմից փեսայական հրաւերներ կարդաւ այդ չքնազներին, բայց Բրաբիոնն և Սրաբիոնն, որոնք դեռ վաղուց թեկղեի վառվուուն սիրոյ հետը կապ ունեին, ոչ մի խրախուսանք կողմանակի մարդիկներից չը կարողացան նրանց կամքն թուլացնել, որովհետև մէն միայն թեկղեի վրայօք կը մտածէին, նորա անմոռանալի վեհանունն էր կարդային, օր յառաջ նորա սէրը համակրել կը շտապէին:

Վահրամն իր քաջ զտւակների հպատակներին բաց ի թեկղեի ձեռքով աղատուած զերիներին, ուրոնք միայն նորան կը պատկանէին, նշանակեց մի արգաւանդ հող, ուրտեղ նրանք Վահրամի առատ ծախքերովն շինեցին իրանց համար բնակութեան կացարաններ, ուստի կարճ միջոցում այդ անմարդաբնակ անապատն ստացաւ մի մարդաշատ զիւղի ձեւ «ձորտ Վահրամի» անունով: Վահրամն կարդաց նրանցը վճռողական իրաւունքներ, ունենալ ամուսնութեան կապ, ամէն մէկը իր հաւատի ծէսով, ինչպէս քաջ հովիւն կունենայ արթուն հսկողութիւն իր հօտին վերայ, որպէս զի տարէ ցտարի իր խաշանց թիւն աւելանայ և նորանցից աւելի արդիւնաւոր օգուտ ստանայ, այնպէս Վահրամն այդ մի ոգով կապուած ձորտ Վահրամի զիւղականների նորա-

բնակների ամէն մի հարկաւոր պիտոյքներն լընելով՝
արդարեւ կը խոստանային իրանց ջանագով աշխաւ
տութիւններովն, Վահրամի կարողութեան բարակ
թելս մալիսյ ձևացնել, նորա գանձի պակասութիւնն
լընել:

Վահրամի ծնողական կամքին էին սպասում
սիրահար զաւակներն, բայց նա տեսնելով, որ այդ
երկուքն էլ մի օրիորդի վերայ կուգէին ամուսնանալ
շուարեցաւ, տարակուսութիւնը Վահրամի սուր դաւ
դափարին վերայ մի անսովոր գաղանիք երեակայեց,
ինչ պէտքէ անէր նա: Այդ երկուսի միանման նախա
տակի ծածուկ խորհուրդն հաղորդեց նրանցը ասե
լով « կը տեսնուի Ձեր երկուսի սիրահարութիւնն մի
« օրիորդի վերայ, ուստի ես բարեզ կը դատէի չ' մի
« շել այդ անծանօթ թեկղիի անունն, մինչդեռ նու
« բանից աւելի չքնաղ թեկղիներ այժմ գրաւուած են
« Ձեր սիրովն: Երբ Բրաբինի և Սրաբինի մէկ մէ
կուց ծածկուած միանման խորհուրդն մերկացաւ,
նրանք երկար իրարու երես կը նայէին առանց խօս
ուղոյ, յետոյ վէճն շարունակուեց. Սրաբինն իր քաւ
ջութեան պատճառներն էր յառաջ բերում, իսկ
Բրաբինն իր աւագ եղբայրութիւնն: Տեսան, որ ու
չինչ չեն շահում, թողին այդ վիճաբանական դործի
վճիռն թեկղիի բարեհամար կամքին, այն է որին նա
կը ցանկանայ: Ուստի Վահրամն ժողովեց իր բոլոր

բարեկամներին, ձորտ Վահրամի գիւղականներին, և մեծ
հարստութիւնով վագեցրին իրանց կառքերը դէպի
չեղոմի քաղաքն, թեկղիի հայրական կացարանն:

Թեկղիի մարգարէական համբաւն վաղուց հըս-
չակուել էր ամէն տեղ, նորա հանձար գաղափարն
արդէն գրաւել էր Արքայի սիրտն: Այդ առթիւ նա
նշանաղրուած էր արքայի մի հատիկ ժառանգի վե-
րայ և մօտ օրերումն բարձրագոյն հրովարտակներով
հրաւիրած էին բոլոր արքայական տոհմականներն
ժառանգի ամուսնութեան հանդէսը կատարելու, բայց
թեկղին, որ իրան քաղցր ծնողաց սրտերն չը կոտրե-
լոյ համար չ' էր համարձակիլ իր տհաճ կամքն երե-
ւան հանելոյ, դեռ նշանաղրութեան օրից ստացել
էր բարակացաւ և որովհետեւ այդ ցաւն յառաջա-
ցել էր սիրուց, ուստի արքունական բժիշկների ղե-
ղատութիւնն չ' ունեցաւ բոլորովին ներգործութիւն:
Աիրուց զրաւուած անուշ թեկղին, ուժից ընկած, ա-
րիւնը ցամաքած իր սիրելիների անուններն մի եր-
կու անդամ թոյլ կերպով կրկնելուցն յետոյ, կը
թուէր, որպէս թէ հողին աւանդեց: Նորա մարմնն
շքեղուն հանդէսով տարան բազմեցրին եկեղեցումն
արքայական ծոխ սեղանի վերայ: Արքայական բար-
ձրագոյն տներն, որոնք թէ զանազան տէրութիւնն-
ներից գումարուել էին թեկղին պսակելու ժառանգի
հետն, կը տեսնէին որ թեկղին արդէն ամուսնացել էր

Նախախնամութեան անդարձ վճռին համեմատ կոյս
հողին հետը, որի ծոցումն պէտք է նա ամփոփուէր
այն օրն: Այն թեկղին, ասում էին, երեկ արքունի
պալատումն ժամանակաւոր հարսնական օրեր պէտք
է վայելէր, այսօր երինաւոր Հօր գրկումն Յիսուսին
յաւիտենական հարս է անուանում: Հեղոմ Հայկու-
նոյն՝ ոտքերն բնական ուժից ընկած՝ թերի վերայ
քարշ գալով, տանում էին իր ազատող միակ դրս-
տեր տիսուր զադաղի յետելից կիսամեռ. նորա սուր
գաղափարն բնականիցն արդէն թիւրուել էր, թողթէ
նորա կինն, որի սրտից ցաւերի կեղևներն դեռ չը թա-
փուած կըկին նորոգուել էին առաջուանից աւելի.
միով բանիւ ընդհանուր տիսրութիւնն իր սեւաթոր
փետուրներովն թուիս ամպոց նման պատել էր քա-
ղաքի վերայ: Այն օրն Վահրամն անթուելի
բազմութիւնով մտաւ այդ վայոց տեսարանի մէջ:
Նրանց կառքերի ձայնիցն քաղաքն սկսեց դղրդալ.
այդ միջոցին թեկղի դիակն կը տանէին գերեզմանա-
տունն, թեկղի յաւիտենական հանդիսան: Վահրամն,
որին կոչել էին թաղման հանդէսը, իր զաւակ-
ներով գնում էր այդ տիսուր տեսարանի յետելից:
Մինչդեռ թեկղի կիսամեռ մարմինն կ'ուզէին իջեցնել
գերեզման՝ հողին պահ տալոյ, Սրաբիոնն մօտեցաւ
անշարժ գաղաղին, ուր հանգիստ քնով կը ննջէր
թեկղի անդայ դիակն, այն համբուրեց նորա գու-

նաթափ երեսն և սկսեց խօսիլ թեկղի դիակին
վերաբերեալ մի քանի խօսք և ասաց բարձր: «Թեկ-
ղին պէտք է իմ և իմ եղբօր մէջ ծագուած ան-
« բաւականութիւնն վճռի, որի համար այսքան բազ-
» մութիւնով եկած ենք հեռի քաղաքից. թոյլ
« տուէք ինձ արթնացնել այդ անկենդան դիակն,
« որպէս զի դորա վճռովն մեզանում ծագուած վէճն
« վերջ ստանայ»: Խօսակցութեան հետը քողար-
կուած կերպով ծաղկի փունջն խփեց թեկղի չորա-
ցած քթին, դիակն կարծես թէ դագաղի միջումն
շարժուեցաւ. կրկնեց դարձեալ, թեկղին նստեց, բայց
դեռ կիսազգայ: Հանդիսականներն բոլորն շփոթուե-
ցան՝ նայելով այդ մեռելայրոյց պատահոյն վերայ:
Սրաբիոնն իսկոյն զրկեց թեկղի գեռ անզգայ մար-
մինն և կուրծքին սեղմած հեռացրեց նորա յաւիտե-
նական անձուկ տնակիցն: Մահաթափ ծաղկի փունջն
երբ երրորդ անդամ մօտեցրեց նորա քթին թեկղին
իսկոյն ոտքի կանդնեց բոլորովին առողջ և զգաց ամէն
մի գործնական հանգամանկներն: Թեկղին իր մար-
դարէական՝ հոգւովն լցուած՝ մանելով ամբոխի կին-
զրոնն, մօտեցաւ արքային, որոյ ժառանգի վերայ նը-
շանաղրուած էր, ասաց ամէնի առջեն համարձակ:
« թող արքայն ինձ ների, նաև իմանայ, որ ես ար-
« գէն նշանաղրուած եմ հինգ ոգիների հետ նորա
« մոքովն պէտք է լինէին՝ առաջինն Վիզայն, պան-

« զոկապետի գուստրն, երկրորդն՝ Բրաբիոնն, չորրորդն՝
« ժառանգն արքայի և Հինգերորդն՝ գերեզմանն, որ
« պատրաստել էին նորա համար): Բայց որովհետեւ
« ևս, ինչպէս մի անձն, ողէսք է մեկի հետն ա-
« մուսնանամ, ուստի կը խնդրեմ այդ սրբազն կար-
« զի խորհուրդն թողուլ իմ կամքին: Այս խօսքերի
վերայ թեկզին կանգ առաւ և լոեց:

Թահկղն կը մնայ լուռ մինչև Ա հատորի լոյս
տեսնելն:

ԱՇԽԱՏԱՎԻՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Զերմ զփացմունքով արտայայտում եմ իմ սրտանց
խորին չնորհակալութիւնն հետեւեալ Պարոններին, Հայ Տի-
կիններին և Օրիորդներին, որոնք բարեհաճեցան իրանց ե-
ռանդուն սրտերն խառնել կարեկցաբար սոյն դոյզն-աշխատ
գործքին հետը, վճարելով միանուագ „Ծնողասէր թեկ-
զի!“ Ի և Ա հատորների տապագրական ծավաքն:

ԵՐԵՒԱՆԻՑ		արծաթ.
Ո.	Կ.	
Մատթէսս Տէր Պօղոսեանց, Կոլէժսկի Բեղկա- տրաստոր...	15	—
Տիկին Շողառ Տէր Պօղոսեանց	10	—
Օրիորդ Ֆլորայ Տէր Խաչատրեանց	5	—
Խրիստաֆոր Տէր Ղաղարեանց, Կոլէժսկի		
Սեկրետար	10	—
Օրիորդ Փեփլունիայ Ալօյեանց	5	—
» Օլինկայ Հառլեանց	2	—
» Մադդաղ Թորոսեանց	2	—
» Ուստիեանայ Մէլիք Ստեփանեանց	1	—
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ.		
Յովհաննէս Յակոբեան Ստեփաննոսեանց ...	10	—
Տիկին Խւղաբեր Ստեփաննոսեանց	10	—
ՆՈՐԲԱՅԱԳԵԴԻՑ.		
Տիկին Համառփիւռ Մ. Ալբիկեանց ...	5	—
Օրիորդ Հեղինէ Մամիկոնեանց	3	—

Օրիորդ Շքանուշ Մամիկոնեանց ...	2	—
» Մազդաղ Բուղրումեանց ...	1	—
» Սառայ Արևշատեանց ...	1	—
» Շուշանիկ Բունեաթեանց ...	1	—
» Բալասան Դայեանց ...	1	—
» Հովհափիմէ Մ. Աբրահամեանց ...	1	—
Զհանրադիշ բէդ, պրիստու Հաշտ. Դատար.	2	—
Յովհաննէս Տէր Խոսհակեան Շահնազարեանց,		
Պօլիցիական ծառայող ...	1	—
Գրիգոր Տէր Խաչատրեանց, ուսանող ...	1	—
Վարդան Մ. Կարապետեան ...	1	—



Տպոգրաֆիա Ամբարդումա Էնֆաջյանց և Ք-0

ՀՀ Ազգային գրադարան



NL0372202

58331

201

201

201



ԳԻՒՆ է 30 ԿՈՊ.

0

